փայտե կոթունին: Թշիկի մի մասը ուղիղ է, որը հարվածելիս մտել է ձկան մարմնի մեջ, իսկ մյուսները՝ կեռված տարբեր կողմեր, որպեսզի ձուկը մնա այդ կեռերում և չընկնի ջուրը: Թշիկի մասերի թեյերն ավարտվում են ձկնորսական կարթերին հատուկ կեռիկներով: Թշիկով որսած ձկները բոլորից համեղն են:

3. Սևանի և Կամոյի շրջաններում կիրառվել են նաև գետի ծյուղը կտրելով, ժեռքով, բահով, թարփ-տանգով /կողովի կատարելագործված ձևը/ և այլ միջոցներով իրագործվող ձկնորսության ձևերն ու եղանակները, որոնք, սակայն, համատարած կիրառություն չեն ունեցել:

4. Ավլաղով, լենդր-սիզգայով, բահով, խշտով և թարփ-տանգով կատարվող ձկնորսության ձևերն ավելի ուշ շրջանի երևույթ պետք է համարել, ավելի բնորոշ Սևանի շրջանին, իսկ Կամոյի շրջանի գյուղերում դրանք չեն կիրառվել /բացառությամբ լենդր-սիզգայի/:

5. Ընդգրկված շրջանների գետային ձկնորսության ժողովրդական եղանակները, այսպիսով, զգալի հետաքրքրություն են ներկայացնում և դրանց համադրական հետազոտությունը լճային ձկնորսության և Հայաստանի մյուս շրջանների համանման եղանակների հետ, կարող է նպաստել հայերի՝ տվյալ բնագավառում ունեցած էթնոմշակութային հմտությունների լուսաբանմանը, մի բան, որ տակավին արված չէ:

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

,,ՎԻՇԱՊ,, ՔԱՐԱԿՈԹՈՂՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԱ/ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հնդեվրոպական վիշապամարտի առասպելի ամպրոպի աստծու հակառակորդ վիշապի անունը կազմվում էր* u̯el արմատով: Այլ տեղում ցույց ենք տվել, որ ,,վիշապ,, / իրան. vēšap / քարակոթողները հայերեն կոչվել են գեղ<* u̯el:

Հմմտ. քարակոթողների առավելագույն խտությունը Գեղամա լեռներում, Գեղարքունիքում /< ուրարտ. ueličuni/, Գեղ լեռան վրա, ,,վիշապների,, մի խմբին հալ.ևան ամրոցի Գեղի անունը, վրաց. gveli ,,օձ,, բառը, որը փոխառություն է հին հայերենից, երբ* u-ն գ դառնալու միջանկյալ վիճակում էր, ևն:

2. Քարակոթողների վրա հաճախ պատկերված է ցլի գլուխ /ցուլը հայ և հարևան ժողովուրդների և, ամենայն հավանականությամբ, նաև հին հնդեվրոպացիների պատկերացումներում ամպրոպի աստծու մարմնավորումն է/՝ տիեզերական եռամաս ծառի ճևով փված ցլի մորթու վերե-

վում, որը համընկնում է հնդեվրոպական առասպելաբանական պատկերացումներին: Հնդեվրոպական վիշապամարտի առասպելի հետագա ձևափոխությունը հանդիսացող արևելա-սլավոնական հմայական աղոթքներում հաճախ զուգորդվում են ծառը, քարը, բուրդը և օձը: ,,Վիշապ,, բարակոթողների վրա, ի թիվս այլոց, հանդիպում են նաև խոյի մորթու պատկերներ. հմմտ. հայ. գիլ- ,,քար,, , գեղմն - ,,բուրդ,, , գեղ- ,,վիշապ,, , բուլորը ---* ա̯el-արմատից: Նույնարմատ հնդեվրոպական բառերի այս շարքը կապված է առասպելական պատկերացումների հետ փոխանակական կամ փոխաբերական զուգանմանությունների ձևով:

3. Արևելասլավոնական, հնդկական /և այլ հնդեվրոպական/ առասպելներում վիշապի պարտությունը սկիզբ է տալիս գետերի: ,,Վիշապ,, քարակոթողները գտնվում են գետերի և արհեստական ոռոգման ջրանցքների ակունքներում: Բերված փաստերը վկայում են, որ ,,վիշապ,, քարակոթողները հնդեվրոպական վիշապամարտի առասպելի հետ կապված պաշտամունքի արտահայտություններ են: Նրանց բազմաձևությունը կարող է բացատրվել վիշապամարտի առասպելի տարբեր կերպարների, տարբեր աստվածությունների հետ ունեցած կապով և նաև ժամանակագրորեն: Այդ քարակոթողները ստեղծող ցեղերի էթնիկական պատկանելության վրա կարող է լույս սփռել հայկական միջնադարյան բառարանի գեղնի բառի - ,,հայ,, նշանակությունը , որը, ինչպես ցույց ենք տվել այլ տեղում, առաջացել է գեղ /<* ա̯el -/ դիցաբանական արմատից:

ԷՄՄԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ԱՌԱՋԱՎՈՐԱՍԻԱԿԱՆ ԱՂԵՐՍՆԵՐԸ ԵՎ ԾԱԳՈՒՄՆԱԹԱՆԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

1. Արևելքի ժողովրդա-պրոֆեսիոնալ արվեստում մեծ տեղ է գրավում հարթ և ծավալային պատկերման տիկնիկային թատրոնը, ըստ որում թե մեկի, թե մյուսի ներկայացումներում տիկնիկները զուգավոր են:

Ստվերների թատրոնի ծագման մասին կա մի քանի վարկած: Հերոսի անունն Առաջավոր Ասիայում ունի Կարագյոզ, Կարագազ, Կարագիոզիս, Արագոզ, Կարկուս, Պեշլևան, Քաչալ տարբերակները:

2. Թուրքիայում ավանդություն կա, ըստ որի XIV դ. ապրել են դարբին Կարագյոզն ու նրա բարեկամ քարտաշ Հաջիվաթը: Նրանք իրենց կատակներով խանգարել են Բուրսա քաղաքում կառուցելու մզկիթ, որը պիտի երկնքին հասներ: Սուլթանը երկուսին էլ մահապատժի է ենթարկել: Նմանօրինակ ավանդություն հայտնի է նաև XIX դ. Թիֆլիսից: